ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 739-Ա

«25» հունիսի 2025 թվականի գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՄՐՈՒ ԽՃՈՒՂԻ 66 ՀԱՍՑԵՈՒՄ «ԳԱԶ- ԿՈՄՊՐԵՍՈՐ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 21.05.2025 թվականի թիվ ՔՏՄ/21.02/13325-25 գրությունը **որոշում եմ՝**

1. Կասեցնել «ԳԱԶ- ԿՈՄՊՐԵՍՈՐ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության սեփականության իրավունքով պատկանող Ախուրյան համայնքի Ախուրյան գյուղի Գյումրու խճուղի 66 փողոցում գազալցակայանի տարածքում ինքնակամ կառուցվող շինարարական աշխատանքները:

2. Պարտավորեցնել «ԳԱԶ- ԿՈՄՊՐԵՍՈՐ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը ինքնակամ կառույցն օրինականացնելու համար Ախուրյանի համայնքապետարան ներկայացնել պահանջվող քաղաքաշինական փաստաթղթեր՝ շինարարության թույլտվություն տրամադրելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«25» հունիսի 2025 թվականի
գյուղ Ախուրյան